«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ _ Հեքիաթի ուսուցումը

ԱՌԱՐԿԱ _Դասվար

ՀԵՂԻՆԱԿ _Մարինե Հարությունյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ -<<Ծաղկունք բաց դպրոց >> հիմնադրամ

Բովանդակություն

Ներածություն

ԳԼՈՒԽ I. Հեքիաթի ուսուցումը տարրական դասարանում

1.1.Հեքիաթը իբրև ժողովրդական բանարվեստի ժանր

1.2. Հեքիաթի ուսուցմանը նպաստող միջոցներ (դերախաղ և արտահայտչամիջոցների օգտագործում)

ԴԱՍԻ ՊԼԱՆ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ ժողովրդական բանարվեստի ամենատարածված ժանրերից մեկը՝ հեքիաթը, մշտապես եղել է կրտսեր դպրոցականի դաստիարակության կարևոր խթանիչներից: Հեքիաթի նպատակային ուսումնասիրությունը հատկապես մայրենիի դասաժամերին նպաստում է դպրոցականի անհատականության, մտածողության զարգացմանն ու ձևավորմանը, օգնում նրան կյանքի շատ երևույթներ հասկանալու, ուսուցչի օժանդակությամբ նրա ենթաշերտերի մեջ ներթափանցելու, հերոսների գործողությունները և քայլերը վերլուծելու, գեղեցիկը, բարին, ազնիվը ճանաչելու և գնահատելու, դրանց մասին դատողություններ անելու, պարզ վերլուծություններ կատարելու: Ըստ հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշչի մայրենիի ծրագրով որոշակի պահանջներ են առաջադրված հեքիաթի ուսումնասիրման վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են հեքիաթի ոչ միայն ժանրային առանձնահատկությունների, տեսակների տարբերակման, այլև խոր ու բազմակողմանի ուսումնասիրության, տեքստային աշխատանքների յուրացման, ստեղծագործական կարողությունների զարգացման ու ձևավորման համար:

Հետազոտության արդիականությունը

Մայրենիի դասագրքերում բացառիկ տեղ ունի հեքիաթը, որը դպրոցականների սիրելի ժանրերից է և բոլոր ժամանակներում մեծ դեր է ունեցել աշակերտների արժեքային համակարգի ձևավորման գործում: Այսօր էլ հեքիաթի՝ նոր մեթոդներով համակողմանի յուրացումը մեծացնում է նրա դաստիարակչական, ուսուցողական, ճանաչողական նշանակությունը, խթանում դպրոցականի երևակայության զարգացումն ու ստեղծագործական կարողությունների ձևավորումը:

Հետազոտության նպատակը

Աշխատանքի նպատակը մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների՝ դպրոցականների դաստիարակության, աշխատասիրության, մտածողության, բարոյական արժեքների ձևավորման, զարգացման վրա ներգործության 4 բացահայտումն է և հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորմանը նպաստող մեթոդական քայլաշարի համակարգումը: Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն,

2. մատնանշել հեքիաթների անմիջական ազդեցությունը աշակերտների երևակայության զարգացման և հեքիաթաստեղծման կարողության ձևավորման վրա,

3. հիմնավորել կրտսեր դպրոցականների անհատականության ձևավորման գործում հեքիաթների բացառիկ նշանակությունը,

4. կատարել հեքիաթաստեղծման կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ և ստուգել դրանց արդյունավետությունը նշված գործընթացում:

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը մայրենիի դասագործընթացն է՝ դպրոցականների հեքիաթաստեղծման կարողությունների համատեքստում:

Հետազոտության առարկան

Հետազոտության առարկան դպրոցականների հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորման մեթոդական համալիրն է մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների միջոցով: Ուսումնասիրության տեսական նշանակությունը հետազոտության արդյունքում բացահայտված օրինաչափությունները, կիրառված մեթոդների վերլուծությունները լրացնում են մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի բնագավառում առկա գիտելիքները դպրոցականի հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորման թեմայի շրջանակներում:

ԳԼՈՒԽ I. Հեքիաթի ուսուցումը տարրական դասարանում

Հեքիաթը երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է: Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն: Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով: Նրանք իրենց շրջապատին ծանոթանում են հեքիաթների միջոցով: Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Միաժամանակ

այդ բոլորը ներկայացվում են երեխայի համար հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր... հեքիաթի թեմաները անվերջ են: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ:Մեծահասակները, ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ-որ բան հուշել, դժվարանում են համապատասխան բառեր գտնել, վախենում են, որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց: Այդ իրավիճակից ելքն այն է, որ մեծահասակը երեխայի հետ ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը, իսկ գործնական ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:Հարյուրամյակներ շարունակ մարդիկ ունեցել են շատ բարձր բարոյական ևհոգևոր զարգացածության հասած առաջնորդներ, որոնք իրենց գիտակցությամբանհամեմատ ավելի առաջ են եղել ժամանակակիցներից, նրանք իրենց առաքելությունն են համարել ուղղորդել և սատարել մարդկանց: Ուստի, հաշվի առնելով տեղային և ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկությունները, նրանք ընտրել են տարբեր միջոցներ: Իմաստությունը մարդկանց փոխանցելու ձևերից մեկն էլ եղել է այն, ինչը հետագայում կոչվեց ազգային ավանդություն: Այսպիսով՝ժողովրդական հեքիաթները, առակներն ու լեգենդները մարդկային էության շատ ավելի խորը իմացություն և հավերժական իմաստություն են կրում իրենց մեջ: Հեքիաթների մեջ ժողովուրդն արտահայտում է իր նվիրական երազանքներն ու ձգտումները: Այն ինչ կյանքում անհնար է եղել իրականացնել, մարդիկ ցանկացել են իրականացած տեսնել հեքիաթներում:

Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը: Հաճախ էլ իրար են խառնված իրականն ու երևակայականը:

Հեքիաթները հիմնականում արձակ են ստեղծվել: Պատահում են նաև չափածո հեքիաթներ:

Հեքիաթների մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը, ինչպես՝ «Լինում է, չի լինում», «Կար չկար», «Ժուկով ժամանակով», «Ժամանակով», «Չգիտեմ ո՛ր երկրում, ո՛ր թագավորության մեջ»:

Վերջաբանի համար էլ հատուկ արտահայտություններ կան, ինչպես՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին»:

Հեքիաթների հեղինակը ժողովուրդն է: Նա է ստեղծել դրանք, ինչպես առասպելները, էպոսը, առածները: Դա եղել է շատ հին ժամանակներում:Ավելի ուշ առանձին հեղինակներ մշակում են ժողովրդական հեքիաթները: Նրանք նաև ինքնուրույն հեքիաթներ են գրում: Այդ տեսակի հեքիաթները կոչվում են հեղինակայինՅուրաքանչյուր հեքիաթ ունի դաստիարակչական հզոր արժեք և բարոյականկարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Աննկարագրելիորեն մեծ է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: Ինչպես հանրաճանաչ իտալացի գրող Ջանի Ռոդարին է նշում, հեքիաթը երեխային պետք է կողմնորոշվելու, իրեն ուսումնասիրելու, իհնարավորությունները չափելու, գնահատելու համար: Հեքիաթը միաժամանակ ստեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:Անսահման մեծ է հեքիաթների ինչպես դաստիարակչական, այնպես էլ պատմաճանաչողական և գրական-գեղարվեստական արժեքն ու նշանակությունը:Հեքիաթները ժողովրդի համար միայն ժամանցի առարկա չեն եղել, որոնցով կարելիէր կարճել ձմռան երկար ու ձանձրալի գիշերները, փարատել ցերեկվա ծանրաբեռնվածության ճնշիչ տպավորությունը: Հեքիաթները կատարել են հասարակական լայնզանգվածների լավագույն ձգտումների ու իղձերի յուրահատուկ հաղորդիչի դերը, ամրապնդել են նրանց նվիրական ավանդները իրար հաջորդող սերունդների գիտակցության մեջ: Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները, որոնք մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար, արտահայտել իր մտորումները, որոնել է իր կրած տառապանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամեն տիպի բռնության, ճնշման, անարդարության ու շահագործման դեմ:Մարդիկ դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսների խիզախության, անվեհերության, խելքի ու հնարամտության հիանալի օրինակներով, դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով, չքավորներին ու ընկածներին զորավիգ կանգնելու ազնիվ ձգտումով, արդարությունը պաշտպանելու ևճշմարտությանը հասնելու անձնազոհ պատրաստակամությամբ, ջանադիր աշխատասիրությամբ, հավատարմությամբ և անձնազոհությամբ: Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերի հետ միասին, հեքիաթները հարուստ նյութ են տալիս ժողովրդի հոգեբանությունը, նրա իղձերն ու ակնկալությունները, նրա բուն պատմությունը ուսումնասիրելու համար: Հեքիաթների լավագույն նմուշները այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքն ու ուժը և գեղարվեստական մեծ բավականություն են

պատճառում մարդկանց: Նրանք ունեն յուրահատուկ նշանակություն այնքանով, որքանով որ բանաստեղծական բարձր ձևերի մեջ կերպավորում են ժողովրդի դարավոր մտքերն ու զգացմունքները, մարդկության անկրկնելի մանկությունը:

Այսպիսով, հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացմանամենամատչելի տարբերակներից մեկն է: Այդպես եղել է, կա ու կլինի: Պետք չէթերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում:Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա, կուղղի և կլավացնի նրա պահվածքը, ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբհավատը:Երեխայի համար հեքիաթների կարեւորության, նշանակության մասին կարելիէ խոսել անվերջ: Միանշանակորեն համակարծիք ենք որոշ հետազոտողների վերջնական եզրակացություններին՝ հրաշապատում հեքիաթների դերը երեխաների զարգացման եւ առողջ հոգեկերտվածք ձեւավորելու համար անգնահատելի և անփոխարինելի են: Ի վերջո, «երեխան, որը մեծացել է հեքիաթներ ու լեգենդներ ունկնդրելով, նկատելիորեն ավելի առողջ է, խելացի, քաջ և կրեատիվ»:

1.1.Հեքիաթը իբրև ժողովրդական բանարվեստի ժանր

Հեքիաթի ժանրային առանձնահատկությունները հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ և խոր լավատեսությամբ: Մայրենիի դասագրքերում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ: Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղ. Աղայանը, Հ Թումանյանը և ուրիշներ, որոնց մշակած հեքիաթները մեր դասագրքերի զարդն են: Դասագրքերում հանդիպում են նաև օտար հեքիաթներ, որոնք նույնպես անհրաժեշտություն են՝ այլ ժողովուրդների կյանքին, կենցաղին, մտածողության եղանակին ու ստեղծագործություններին ծանոթանալու համար: Հեքիաթները ստեղծվել են մարդկային հասարակարգի մանկության շրջանում, երբ մարդն ի վիճակի չէր թափանցելու շրջապատի բնական և հասարակական երևույթների էության մեջ, ըմբռնելու դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերը: Հենց դրա հետևանքով էլ հեքիաթները շատ պարզ, դյուրահաս և հաճելի են երեխաների համար, նրանք ոչ միայն սիրով լսում կամ կարդում են դրանք, այլև կրկնակի և եռակի անգամ վերընթերցում: Չկա մարդ, որ հեքիաթ չսիրի:

Հեքիաթները բարի ու գեղեցիկ ավարտ ունեցող իրական կամ երևակայական բնույթի մտացածին պատմություններ են, որտեղ արտահայտված են մարդկանց երազանքներն ու ազնիվ ցանկությունները: Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենասիրված ու ամենատարածված ստեղծագործություններից են: Բանահյուսական բոլոր ժանրերի, այդ թվում հեքիաթների ստեղծողն ու պահպանողը ժողովուրդն է: Մարդկությանը հմայել են արդարությունը պաշտպանող և չարը հալածող հեքիաթային խիզախները: Հեքիաթներն իրենց հերոսական ու մարդասիրական ոգով, առօրյա կենսափորձից բխող առողջ բարոյախոսության և խորիմաստ փիլիսոփայությամբ գրավել ու գրավում են բոլոր տարիքի 6 ընթերցողներին, առավել ևս մանուկներին: Թումանյանը հեքիաթների մասին ասել է, որ դրանք ամենաիմաստուն գրվածքներն են, քանի որ դրանց մեջ խորհրդանշական ձևով արտահայտված են հավերժական գաղափարներ: Իսկապես, ամեն հեքիաթ բարձր գաղափարների ու մարդկային հարաբերությունների արտահայտություն է: Հեքիաթներում հերոսների բնավորության գծերը մեկ առ մեկ չեն հիշվում, պարզապես ասվում է՝ չար ու բարի: Հեքիաթի մեջ մարդիկ և դեպքերը պատկերվում են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ հրաշապատում գծերով: Հեքիաթների մեծ մասն արձակ է: Բայց պատահում են նաև չափածո հեքիաթներ: Օրինակ՝ Հ. Թումանյանի <>, «Գառնիկ ախպերը»: Հեքիաթը, որպես գրական տեսակ, պատկանում է էպիկական սեռին: Հեքիաթները պատմվում են փոխանցվելով բերնից բերան, մի ժողովրդից մյուսին. նույն բովանդակությամբ հեքիաթը տեսնում ենք տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ: Հեքիաթն ունի գրական տեսակի իր կայուն հատկանիշները: Այն հաճախ սկսվում է<< Լինում է, չի լինում>>, <<Կար չկար>>, <<Ժուկով- ժամանակով>> բառերով: Այս պայմանական սկիզբը առկա է շատ ժողովուրդների մոտ: Հեքիաթում իր երևակայությամբ մարդը հաղթում է ժամանակին ու տարածությանը: Ժամանակը հեքիաթում կարող է կանգնել կամ թռչել տիեզերական արագությամբ. հեքիաթի որոշ հերոսներ ապրում են շատ-շատ երկար, չեն մեռնում, նրանք կարող են մնալ միշտ երիտասարդ, մեռնել և վերականդանանալ, ծերանալ ու երիտասարդանալ, տգեղանալ և գեղեցկանալ: Բացի կայուն սկզբից, հեքիաթն ունենում է բարի ավարտ. վերջում բարին միշտ հաղթում է, իսկ չարը՝ պատժվում: Հեքիաթների մեծ մասում երկնքից ընկնում է երեք խնձոր՝ մեկը պատմողին, մյուսները լսողներին: Ժողովրդական հեքիաթները մշակվել են տարբեր ժողովուրդների դասական գրողների կողմից: Ա. Ս. Պուշկինը ուսումնասիրել ու մշակել է ռուսական բազմաթիվ հեքիաթներ: Ժողովրդական հեքիաթների հանդեպ անսահման սեր է ունեցել Հ. Թումանյանը: Նրա դուստրը՝ Ն. Թումանյանը, իր հուշերում գրում է հոր խոսքերը. < <Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր , անվերջ,հարուստ ու շքեղ

աշխարհ է> >: Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ բուսակենդանական, հրաշապատում և իրապատում: Իրապատում հեքիաթները լինում են՝ կենցաղային, հերոսական, սոցիալական բնույթի և այլն: Այս բոլորի հիմքն էլ մարդկային կյանքն է՝ բազմապիսի փոխհարաբերություններով: Մայրենիի դասագրքերում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ. ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել՝ Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, և ուրիշներ, որոնց մշակած հեքիաթները մեր դասագրքերի զարդն են:

1 Հեքիաթում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միաձուլված : Հրաշապատում հեքիաթները, լինելով նախնադարյան մարդու ստեղծագործություններ, վառ երևակայության, հոգիների, կախարդական աշխարհի և առհասարակ գերբնական երևույթների հետ կապված պարզ պատմություններ են, որտեղ հեքիաթի հերոսներին օգնում կամ խանգարում են թռչող գորգն ու գավազանը, ցախավելը, չար կախարդներն ու բարի փերիները: Կախարդական հեքիաթների հիմքում ընկած է չարի ու բարու պայքարը, որն ավարտվում է բարու հաղթանակով, և ընթերցողի մեջ առաջանում է հավատ չար ուժերի կործանման անխուսափելության նկատմամբ: Օրինակ՝ <Կախարդուհին>/ Շառլ Պերո/, <Ոսկի քաղաքը> /Հ. Թումանյան/ և այլն: Բուսակենդանական հեքիաթների բնորոշ գծերից են կենդանիների և բույսերի անձնավորումը, երբ նրանց վերագրվում են մարդկային բնավորության գծեր: Բուսակենդանական հեքիաթի կառուցվածքը պարզ է. այստեղ բացակայում են կախարդական երևույթներն ու առարկաները: Հեքիաթի հիմնական հերոսները կենդանիներն ու բույսերն են: Նրանցից յուրաքանչյուրը պատկերվում է իրեն հատուկ գծերով: Օրինակ՝ աղվեսը խորահամնկ է, նապաստակը՝ վախկոտ, գայլը՝ ագահ: Հեքիաթը ներկայացնում է կենդանու ոչ միայն տվյալ հատկանիշը, այլև չարի ու վատի կործանումով:Կյանքի մանրուքների մասին չէ, որ ժողովուրդը հորինում է հեքիաթ. ամեն մի հեքիաթի մեջ առաջ են քաշվում սոցիալական խոշոր հարցեր: Բայց այդ սոցիալական խնդիրներն այնքան պարզեցված ձևով են ներկայացվում, որ հեքիաթը երեխաներին սոցիալական կյանքին ծանոթացնելու լավագույն միջոցն է դառնում: Ժողովրդական հեքիաթներում ընդգծված է ժողովուրդների միասնության գաղափարը: Բազմաթիվ հեքիաթներ կան , որոնցում դրական հերոսը հաղթանակի է հասնում այլ ազգերի ներկայացուցիչների օժանդակության շնորհիվ, շատ հեքիաթներում դրական հերոսը սիրահարվում է այլ ազգի պատկանող աղջկան և բազմաթիվ դժվարություններ հաղթահարելու

գնով իր երազն իրականություն դարձնում: Օրենքը թշնամանք է սահմանել ժողովուրդների միջև, ժողովուրդն օրենքին դեմ է գնացել, աչքը չի հեռացրել եղբայրության կամուրջից:

2 Ժողովուրդը բանահյուսությունը ստեղծել է՝ գիտակցելով նրա դերն ու նշանակությունը հասարակական կյանքում, սերունդների դաստիարակաության գործում: Ժողովրադական բանահյուսությունը մարդկության ամբողջ պատմության ընթացքում ստեղծված մշակույթի ծաղիկն է. դա հասարակական այն երևույթներից է, որ իր գերակշռող մասով ընդունելի է մեզ համար, համահունչ է մեր ժամանակի հետ

ախաղ և արտահայտչամիջոցների օգտագործում)

Ժամանակակից հեքիաթների դերը տարրական դասարաններում կրթության , հոգևոր և բարոյական աշխարհում անգնահատելի է: Այս հեքիաթները ստեղծվել են որոշակի ռիթմով, տեմպով, որով դասավորվում են երեխաների մտքի կարողությունները,

1.**2. Հեքիաթի ուսուցմանը նպաստող միջոցներ (դեր** ըստ՝ ընկալումների: Ռոդարին հոգատարությամբ պահպանել և սիրով սերունդներին է փոխանցել, ոչ միայն հեքիաթի սյուժեն, այլև իրեն բնորոշ ոճը, խոսքն ու լեզուն, թևավոր խոսքերն ու բարքերը:

Հեքիաթի լեզուն հարուստ է աֆորիզմներով, կրկնություններով, շատ ուսուցողական է, որը բարձրացնում է երեխաների ոգին, դիպչում նրանց հոգու լարերին: Հեքիաթների դերը երեխաների զարգացման գործում բազմազան է՝ սկսվում է երևակայության զարգացումից, որին հաջորդում է ճիշտ խոսքի ձևավորումը: Հեքիաթը երեխաներին մատչելի լեզվով սովորեցնում է կյանք:

Հեքիաթի ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես պատմվածքինը, այսինքն՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Սա նշանակում է՝ հեքիաթի ունկնդրումը պիտի իրականցվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ:

Երեխաները ուզում են հավատալ (ինչպես մարդկության մանկության շրջանում) հեքիաթում տեղի ունեցող դեպքերին՝ «կախարդական գավազանի» գոյությանը, թռչող ձիերի, ցախավելի, գորգի հզորությանը և այլն: Նրանք հիանում են հեքիաթների բարի հերոսների հաղթանակներով, հնարամտությամբ և ձգտում են նմանվել նրանց՝ լինել բարի, արձագանքող, ապրումակցող, համագործակցող, արդար և ազնիվ: Սա է հեքիաթի ուժը, որի բացահայտումով

էլ պայմանավորված է նրա բարոյադաստիարակչական կողմը։ Այս խնդրի լուծումը ևս պետք է «բռնի», պարտադրող բնույթով, երեխայի վզին փաթաթող ոճով չկազմակերպվի։ Հեքիաթը կկորցնի իր ազդեցությունն ու համոզիչ տպավորությունը, եթե մենք փոքրիկներին շինծու, կեղծ ճանապարհով բերենք եզրակացության։ Դաստիարակն իր կատարած աշխատանքի մեջ պիտի վստահ լինի՝ հասա՞վ արդյոք իր նպատակին. ծագե՞ց արդյոք երեխաների մեջ հեքիաթի հերոսների նկարմամբ սեր, փայլեցի՞ն արդյոք երեխաների աչքերը, նրանց զգացմունքային, բարոյականային աշխարհը հարստացա՞վ։ Այդ դեպքում երեխաներն իրենց պարզ լեզվով և անկեղծ ու անմիջական դատողություններով կասեն, թե ինչ սովորեցին հեքիաթի հերոսներից, որն է հեքիաթից ստացած գլխավոր դասը և այլն:

Հեքիաթն այն ստեղծագործություններից է, որը կարելի է ուսուցանել դերերով և բեմականացնել։ Սա մեծ բավականություն է պատճառում երեխաներին, սակայն դերերով խաղից առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն, կերպարների բնավորությունների առանձնահատկությունների քննարկում, նրանց՝ որոշակի դեպքերում դրսևորած վարքի դիտարկում, ընտրովի խաղ։ Այս ամենից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը:

Բոլոր երեխաները սիրում են ունկնդրել հեքիաթներ։ Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ուսուցիչը պիտի դասի ժամանակ նաև հեքիաթներ պատմի։ Նրա վառ ու տպավորիչ խոսքը կնպաստի, որ երեխաները ոչ միայն ստանան հեքիաթ պատմելու արտահայտչականության նմուշ, այլև զգան հեքիաթի լեզվի և ոճի հմայքը։ Այս իմաստով շահեկան և նաև դերասանների կատարմամբ ներկայացվող հեքիաթների ունկնդրումը:Հեքիաթի պատմումը կամ դերասանների կատարմամբ ունկնդրումը աչքի է ընկնում իր զգացմունքայնությամբ, խոսքի հստակությամբ և պատմողի դիմախաղերի պայծառությամբ։ Պատմողի հեքիաթային ոճը, ձայնը, դիմախաղերը օգնում են, որ երեխաներն ավելի ճիշտ և խորությամբ ըմբռնեն ստեղծագործության գաղափարը։ Կերպարների արարքներն ու խոսքը, և տպավորություններն ավելի պայծառ ու կենդանի լինեն։ Առավել շահեկան է հեքիաթը պատմել ոչ սովորական պայմաններում՝ գորգի վրա շրջանաձև նստած, բարձերի վրա թիկնած, կոճղերի շուրջ հավաքված, խորհրդավոր դեկորների և լույսերի առկայության պայմաններում և այլն:Նշենք, որ երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը։ Առավել ևս, օգտակար է հեքիաթի շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին։ Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է գործածել նաև ուսուցչի կամ աշակերտների

«կազմած» նկարներով պլանը։ Սա պատմելու կարողության ձևավորման առաջին փուլն է։ Հեքիաթի բովանդակության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով, մրցութային և այլ եղանակներով:Շահեկան է երեխաներին հանձնարարել՝ անգիր սովորել այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում, և պատմելիս անգիր արտասանել դրանք:

ԴԱՍԻ ՊԼԱՆ.

Դասարան - II

Թեմա՝ <Երկնքից 3 խնձոր ընկավ> թեմայի ամփոփում

Դասի նպատակները՝

Աշակերտները՝

. կվերհիշեն ժողովրդական բանահյուսության տարրերը,

. կհարստացնեն մտահորիզոնը հեքիաթի մասին գիտելիքներով,

. ձեռք կբերեն տեղեկություններ հեքիաթագիրների կյանքի վերաբերյալ,

. կկարողանան գործնականում տարբերակել իրապատում, հրաշապատում և կենդանական հեքիաթները,

. կկառուցեն նկարագրական գեղեցիկ խոսք,

. կսովորեն գնահատել սեփական և ուրիշների արարքները,

. բացահայտել հերոսների բնավորությունների բնորոշ գծերը:

Մեթոդները՝ մտագրոհ, խմբավորում, կենսագրական բանաստեղծություն:

Դասաժամին անհրաժեշտ դիդակտիկ նյութեր՝

. գրողներ, հեքիաթագիրներ մեծադիր նկարը,

. հեքիաթներից դրվագներ:

Դասի ընթացքը՝

Իմաստի ընկալում.

Հնչում է երաժշտություն, անտառային ձայներ:

. Այսօրվա մեր դասը կսկսենք <Հրաշքների դաշտ> խաղով: Ես ձեզ հարցեր կտամ և պատասխանների առաջին տառերի միջոցով կգտնենք թաքնված բառը:

. Հեքիաթի որ հերոսն է անբան, աշխատել չի սիրում և ամբողջ օրը նստած մաստակ է ծամում:

. Հուռին

. Այն ինչն է, որ քնած ժամանակ ենք տեսնում:

. Երազ

. Անհաղթ հերոս, ո՞վ մին զարկում է, ջարդում է հազար:

. Քաջ Նազար:

. Վինի Թուխի ընկեր իշուկի անունը:

. Իա:

. Անդերսենի հեքիաթի հերոսներից, որ մեծանում և դառնում է գեղեցիկ կարապ:

. Անճոռնի ճուտիկը:

. Սպիտակաձյունիկի յոթ ընկերները:

. Թզուկները:

հ	ե	ք	ի	ա	թ

. Հեքիաթ բառը ինչ է ցույց տալիս:

. Ինչ հարցի է պատասխանում հեքիաթ բառը:

. Հիմա եկեք թվենք այն ամենը, ինչ զգում ենք հեքիաթ բառը ասելիս:

. Ինչպիսի ստեղծագործություն է հեքիաթը:

. Հեքիաթը արձակ ստեղծագործություն է:

. Հեքիաթը ստեղծագործության որ ժանրին է պատկանում:

. Թվարկեք ժողովրդական բանահյուսության ժանրին պատկանող ինչ ստեղծագործություններ գիտեք:

. Հիշեք, թե ինչ բառերով են սկսվում հեքիաթները:

. Լինում է չի լինում, ժուկով ժամանակով…

. Ինչ բառերով են ավարտվում:

. Այո երեխաներ հեքիաթների մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը: Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ստեղծագործություններից է: Այն եկել է դարերի խորքից:

Ժողովրդի ծոցից դուրս են եկել բազմաթիվ հեքիաթներ և փոխանցվել սերնդեսերունդ: Հեքիաթներն ամփոփում են ժողովրդի երազանքներն ու ցանկությունը: Այն, ինչ հնարավոր չէ իրական կյանքում, մարդիկ դրանք կատարում են հեքիաթներում: Հեքիաթները ծնվել են ժողովրդի ծոցից: Ավելի ուշ հեղինակները մշակել են այդ հեքիաթները, նաև գրել են ինքնուրույն հեքիաթներ: Եվ նրանց անվանել են հեքիաթագիրներ:

. Եվ հեքիաթներում միշտ ով է հաղթանակում:

. Հեքիաթը ինչ եք անում:

. Լսում, կարդում, դիտում…

. Եկեք թվարկենք մի քանի հեքիաթներ, որոնք դուք կարդացել եք:

. Ինչպես տեսնում եք մեր դասարանում հյուրեր ունենք՝ <Վերնատուն> գրական խմբակի հիմնադիրը և անդամներ, հյուր են նաև Դանիայի գրող և ռուս գրողներ:

. Նրանք ներկայացնում են իրենց կյանքը.

Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ղազարոս Աղայան, Հանս Քրստիան Անդերսեն, Լև Տոլստոյ

. Իսկ երեխաներ հեքիաթները քանի տեսակ են լինում:

Երգ <Հեքիաթների գիրքը>

<Երկնքից ընկավ երեք խնձոր> բաժնում մենք ծանոթացանք, կարդացինք հեքիաթներ և ձեզ դուր եկած հեքիաթը եկեք բեմադրենք <Սուտասանը>:

. Ինչ սովորեցինք մենք այս հեքիաթից:

. Այս բաժնում էլ ինչ հեքիաթներ ենք անցել, եկեք թվարկենք:

շուն աղվես արջ

Տեղեկություններ տանք այս կենդանիների մասին:

Օգտագործել Խմբավորում մեթոդը

Հեքիաթային անկյուն ունենք դրված թատրոն-գրքեր, ով կներկայացնի:

<Ով աշխատի, նա կուտի>

<Սպիտակաձյունիկը և յոթ թզուկները>

<Կարմիր գլխարկը>

.Աշխատանք քարտերով

Քանդված նախադասություններ մեթոդը /վերցված են հեքիաթներից/:

Անվանակապ

Հերոսներով հարուստ ես

Երեխաները սիրում են քեզ

Քնելիս ես հայտնվում

Իրական ես իմաստուն,

Ապրում ես մեր մտքերում

Թևեր տալիս մեր հոգուն:

Անդրադարձ

Կենսագրական բանաստեղծություն մեթոդը

Մեր դասի հիմնական հերոսը, ով էր /հեքիաթը/

Ես

Բնավորությունս - բարի

Ազգականներս - առակ, առած, պատմվածք

Սիրում եմ - ընթերցասեր երեխաների

Կարիք ունեմ - ընթերցելու

Վախենում եմ - չարից, կախարդից

Տալիս եմ - գիտելիք

Ուզում եմ - կարդալ

Բնակվում եմ - գրկում

Տնային հանձնարարություն

Գրել տեղեկություն Շառլ Պերոյի մասին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կատարած հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները. Երեխաների համար հեքիաթ ընթերցելիս պետք է հեքիաթի ներքին հույզերն¬ ու զգացմունքայնությունը հասցնել այնպիսի ընթերցանությամբ, որը նրանց մեջ սկզբից եթե առաջացնի համապատասխան ապրումներ և հուզական վիճակ: Ցանկացած առարկայի ուսուցում, որպեսզի արդյունավետ լինի, պետք է¬ կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես, ինչպես նա ընկալում է աշխարհը՝ գունագեղ , հստակ ու մատչելի: հեքիաթաստեղծման կարողության ձևավորման համար պետք է սովորողներին¬ հանձնարարել շատ հեքիաթներ կարդալ: Պետք է կարողանան վերարտադրել կարդացած հեքիաթները իրենց բառերով, տարբերեն հեքիաթի տեսակները, տարբերեն հեքիաթում իրականն ու անիրականը, հասկանան հեքիաթի բարոյախրատական դաստիարակության իմաստը, քննարկեն, վերլուծեն, հայտնեն իրենց կարծիքները հեքիաթի հերոսների վերաբերյալ: Հետևաբար կունենան սեփական կարծիք, մոտեցում, բառապաշար, մտքեր, ինչը կխթանի, որ իրենց հեքիաթը հորինեն: Որպեսզի աշակերտների մոտ հեքիաթի գաղափարը ավելի տպավորվի, կարծում եմ

• որ նրանք հաճախ պետք է այցելեն տիկնիկային թատրոն, մասնակցնեն հեքիաթների բեմականացրած միջոցառումների, իրենք էլ լինեն մասնակից և խաղան հեքիաթային հերոսների դերեր: Կարևոր է՝ ուսուցիչը դասը հետաքրքիր և արդյունավետ անցկացնի՝ կիրառելով

• ուսուցման փոխներգործուն մեթոդներ,որոնք աշակերտին կդարձնեն դասի անմիջական մասնակիցը և հնարավորություն կընձեռեն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Հեքիաթը արդյունավետ միջոց է ոչ միայն երեխաների ստեղծագործական

• կարողությունների զարգացման, այլև մտքի ճկունության, երևակայության զարգացման գործում: Օրինակ՝ Հ. Թումանյանի ‹‹Քաջ Նազարը››, Ղ Աղայանի ‹‹Անահիտը›› հեքիաթները անավարտ են և հնարավորություն են ընձեռում աշակերտներին ազատություն տալ իրենց մտքերին՝ հեքիաթաստեղծման կարողության ձևավորման համար: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հպարտ լինի այն գիտակցումով , որ կարող է կրթել ու դաստիարակել ինքնուրույն մտածող, կարդացածին քննադատորեն մոտեցող, բարի, արվեստասեր, սեփական հույզերը, ապրումներն ու մտքերը մայրենի լեզվով գեղեցիկ, անկաշկանդ արտահայտող, գործուն, աշխատասեր անհատներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյումիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա. <Զանգակ> հրատ. , 2015: 2.

2.Հովհ.Թումանյան , Երկերի ժողովածու, հ. V, Ե., 1945: 3.

3.Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Ե., 2010: 4.

4.Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., 1945:

5. Ղանալանյան Ա. Տ., Հայ ժողովրդական հեքիաթները (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1965, N 3:

6. Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995:

7 . Տեր-Գրիգորյան Ա. Ե.,Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան , 1980:

8. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 2, «Մանմար», Երևան 2016:

9. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 3, «Մանմար», Երևան 2014:

10. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 4, «Մանմար», Երևան 2016: